

## ԲԱՅՎՈՂ-ՉԲԱՅՎՈՂ ՍԱՀՄԱՆՆԵՐ

– Իմ մոր ծննդյան վկայականում Ալեքսանդրոպոլ է գրված,- ասաց Կարսի հեռուստատեսության տնօրեն Ալիջանը, երբ մեկ առ մեկ ձեռքսնդմումով և անուններ փոխանակելով համարեցինք, որ ծանոթությունը կայացել է: Բայց Ալիջանը հենց այդքանն էր ուզում ասել` նա այդ թեմայի մեջ խորանալու տրամադրություն հաստատ չունեմ: Գոնե այդ օրը չունեմ:

–1918-ին Ալեքսանդրոպոլից գեղեցիկ շատ աղջիկներ գերեվարեցին: – Իբր իմիջիայլոց, ասացի ես` փորձելով չնկատել նրա խուսանավելը, բայց իմ այդ պահվածքն այնքան էլ տեղին չէր: Ալիջանը հարցական նայեց իմ ասածները թարգմանել չտապող թարգմանչին. այդ դադարը տարօրինակ թվաց նրան: Ի վերջո թարգմանվեց պատասխան չպահանջող հարցը, և Ալիջանը հրաշալի մանկեց` ե՛ր կարծես թե պատասխանելով, ե՛ր հմտորեն թեման փոխելով.

– Մորս կողմից իմ հայ լինել-չլինելու մասին խոսենք այն ժամանակ, երբ մեր երկու երկրների միջև սահմանները կբացվեն, և ես սահմանագլխի կկառուցեմ իմ հյուրանոցը ու ձեր այս խմբին կընդունեմ որպես առաջին հյուրեր: Բայց հիմա մեր թեման թող Չարենցը մնա, ում հայրական տունը փնտրելու եք եկել դուք:

Ալիջանն այդ մասին գիտեր և իր ավագ եղբոր` Կարսի քաղաքապետ Նախի Ալիբեյոյլու պատմածներից, և Մարտին Թադևոսյանի հետ արդեն կայացած մտերմական հարաբերությունների արդյունքում: Նրա եղբայր Նախի Ալիբեյոյլին համոզված է, որ »սահմանակից երկրների բարի դրացիական հարաբերությունների պահպանման վրա սահմանի բացումը միայն դրական ազդեցություն կարող է ունենալ«: Կարսի քաղաքապետի պաշտոնավարման բոլոր տարիներին այդ հարաբերությունների բարելավման նկատելի քայլեր նա շատ է արել:

### Նոթատեսություն

1992 թ. հուլիսի 11-ին հայ-թուրքական միջպետական սահմանի Ջրափի հատվածում, ապա Գյումրի քաղաքում հանդիպում են Գյումրի քաղաքի և Կարս նահանգի պատվիրակությունները` քննարկելու հայ-թուրքական սահմանամերձ շրջաններում առևտրի կազմակերպման հնարավորությունները:

1993թ. մարտի 15-ին Գյումրիի քաղաքապետը թուրքական կողմին ներկայացնում է Կարսի նահանգի և Գյումրիի միջև առևտրատնտեսական համագործակցության առաջարկ:

1993թ. հունիսի 29-ին Հայաստան է այցելում Կարսի նահանգապետ, սահմանային կոմիսարը` Հայաստանին սահմանակից 3 շրջանների կայմականների, ռազմական փորձագետների և Կարսի ոստիկանապետի ուղեկցությամբ:

1993թ. հուլիսի 7-ին պատասխան այցով Կարս է մեկնում ՀՀ պատվիրակությունը: Թուրքական կողմը հավաստիացնում է, որ հնարավորություն կա բացելու Կարս-Գյումրի երկաթգիծը և ավտոճանապարհը:

1999թ. սեպտեմբերի 6-ին Շիրակի մարզ է այցելում Կարսի նահանգի պատվիրակությունը: Ստորագրվում է Կարս և Գյումրի քաղաքների մունիցիպալ հարաբերությունների համագործակցության առաջարկությունների արձանագրություն:

1999թ. սեպտեմբերի 8-ին Նախի Ալիբեյոյլու և Գյումրիի քաղաքապետի միջև ստորագրվում է փոխադարձ այցելությունների մասին համաձայնագիր:

2000թ. հունվարի 17-21-ը Կարսի նահանգ է այցելում Շիրակի մարզի ներկայացուցիչների պատվիրակությունը:

2002թ. հուլիսին Կարսի քաղաքապետի Նախի Ալիբեյոյլին Ստամբուլում կայացած »Թուրք-հայկական երկխոսության քաղաքացիական ասպեկտը« խորհրդաժողովում հայտարարել է, որ Թուրքիա-Հայաստան փակ սահմանն ուժգին հարվածում է Թուրքիայի

արևելյան շրջանների տնտեսությանը: 1993-ին Կարսի շրջանը դիմամիկ գարգանում էր, որովհետև սահմանը բաց էր:

2004 թվականի հունիսին Ալիբեյլօղլին Կարսի բնակիչների շրջանում ստորագրահավար կազմակերպելու արշավ ծավալեց: Այլ հարց է, թե՞ թուրքական կառավարությունն այդ առաջարկի մերժման ինչ պատրվակ գտավ: Մեզ համար կարևոր է, որ Կարսում բարյացակամ են տրամադրված սահմանի բացմանը:

Ալիջանը, որ մեզ էր միացել մեր հետքերով եկող ու մեզ շարունակ նկարահանողներից հենու պահելու գործընկերոջ մտահոգությամբ, փորձում էր Չարենցից մի նրկտող կրկնել, որ նախորդ գիշեր հյուրանոցում հայերեն անգիր էր արել մեր խմբի հետ նրկժամյա »փորձից« հետո: Երկտողը ստացվեց, ու Ալիջանը մեր ծափերին արժանացավ:

– Մի կարգին լուսանկար էլ չունեն,- թարգմանիչը փոխանցեց Ալիջանի հանդիմանությունը:

– Ես քեզ կուղարկեմ,- փութացի հանգստացնել նրան:

– Առայժմ սրանով եմ յուր գնում,- հանելով դրամապանակը, ասաց Ալիջանը:

Իմ տարօրինակ հայացքին ի պատասխան նա ցույց տվեց մեր 1000 դրամանոց թղթադրամը՝ Չարենցի դիմանկարով:

Ես հիացմունքով նայեցի Ալիջանին. ինձ հաճելի էր նրա այդ բարի վերաբերմունքն առ Չարենցը: Նրա հետ մեր գրույցի շարունակությունը մի հրաշալի ձեռնարկումի սկիզբը դրեց՝ նա ցանկություն հայտնեց իր հովանավորությամբ թուրքերեն լեզվով հրատարակել Չարենցի տաղերը:

Հրաժեշտին Ալիջանը որսաց մեր խմբի անդամների սևեռուն հայացքները (գուցե մտածեց, թե՞ գլումրեցու դիմագծեր են փնտրում իր դեմքին), որոնց ի պատասխան տողեր մեջքերեց Ղուրանից. »Աստված ձեզ չի արգելում բարի, արդար և բարեկամական վերաբերմունք ունենալ նրանց նկատմամբ, ովքեր ձեզ հետ կրոնական պայքար չունեն«: Ահա այսպես, նա անխոս պնդեց այն, ինչ ասել էր ավելի վաղ. »Այդ թեման թողնենք մինչև սահմանի բացվելը«:

